ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1477 25.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱՐ
ՄՏԻՑ № 4322
«29» 10 2014 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Թումանյանի ՁՊՎ արձանագրել է մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի միջանցքից դեպի զբոսաբակ տանող հատվածը ամբողջությամբ գտնվում էր ջրի մեջ, որը ՁՊՎ-ի տարածք է ներթափանցում բաժնի երկրորդ հարկից և անհնարին էր անցնել դեպի զբոսաբակ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2/*
2. ՁՊՎ-ում բացակայում էր լոգանքի համար նախատեսված տաք ջուրը, չէր գործում ջրատաքացուցիչը:
3. Բուժսենյակը համատեղված էր քննչական սենյակի, հերթապահ ոստիկանի սենյակի հետ և գտնվում էր ռեժիմային գոտում:

Խախտում՝

ՁՊՎ-ում առկա էր ըստ ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի պահանջների <<Ձերբակալված անձանց բուժզննության և բուժօգնության>> գրանցամատյանը, միաժամանակ ՁՊՎ-ում առկա էր անհասկանալի գրանցամատյան <<Ձերբակալված և կալանավորված անձանց թարմ մարմնական վնասվածքների հաշվառման>>: Այս ամենի տարօրինակն այն է, որ ըստ ՁՊՎ-ի վարչակազմի բուժզննությունն իրականացվում է հրավիրված շտապօգնության բժիշկների

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՍՏԱՑՎԱԾ
8360
28 10 2014 թ.

կողմից, բայց հրավիրված բժիշկը համապատասխան գրանցամատյանում մարմնական վնասվածքները չի գրանցում: Առկա մարմնական վնասվածքների վերաբերյալ ՁՊՎ-ի վարչակազմը գրառում է կատարում <<նորաստեղծ>> <<Ձերբակալված և կալանավորված անձանց թարմ մարմնական վնասվածքների հաշվառման>> գրանցամատյանում: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 3,4/*

Դիտորդական խումբը կարծում է, որ պետք է միջոցներ ձեռնարկվի, որպեսզի հրավիրված շտապօգնության բժիշկները արձանագրեն առկա մարմնական վնասվածքները, այլ ոչ թե վարչակազմը միջոցներ ստեղծի դրանք կատարելու համար:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2980 <<17>> 11 2014թ.

Ձեր 25.10.2014թ. թիվ 2621/1477 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2014թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները և թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Լոռու մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. 2014թ. հոկտեմբերի 10-ին բաժնի վարչական շենքի երկրորդ հարկի սանհանգույցի ջրատար խողովակը հնամաշ լինելու պատճառով վնասվել է, ինչի հետևանքով ջուրը առաստաղից թափվել է ՁՊՎ-ի միջանցք՝ խոնավեցնելով և վնասելով պատերը: Վնասված խողովակը ներկայումս նորոգվել է, իսկ պատերը չորանալուց հետո ՁՊՎ-ի միջանցքում կկատարվեն վերանորոգման աշխատանքներ:
2. ՁՊՎ-ի ջրատաքացուցիչը ներկայումս վերանորոգվել է և աշխատում է անխափան:
3. Ոստիկանության Թումանյանի բաժնի վարչական շենքը կառուցվել է խորհրդային տարիներին, ուստի շենքային սուղ պայմաններից ելնելով բուժսենյակը համատեղված է քննչական սենյակի հետ, որը հնարավորության դեպքում օգտագործվում է նաև որպես ոստիկանի հանգստի համար:

Հարկ է նշել, որ ոստիկանության Թումանյանի բաժնի ՁՊՎ-ում պահվող անձանց թվաքանակը շատ փոքր է (2013թ. ՁՊՎ-ում պահվել է 38 անձ, 2014թ. 9-ը ամիսներին 24 անձ) ուստի բուժզննության և քննչական գործողություններ կատարելու գործընթացները երբևէ չեն համընկել և հնարավոր են լինում նշված գործողությունները կատարել առանց խոչընդոտների:

4. Ոստիկանության Թումանյանի բաժնի ՁՊՎ-ում գտնվող <<Ձերբակալված և կալանավորված անձանց թարմ մարմնական վնասվածքների հաշվառման>>

գրանցամատյանը կազմվել է ՁՊՎ-ի վարչակազմի կողմից՝ ներքին վարման նպատակով, գրանցելու մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված անձանց տվյալները, հետագայում մարմնական վնասվածքներով անձանց վերաբերյալ արագ հաշվետվություններ ներկայացնելու համար: Նշված գրանցամատյանը հանդիսանում է զուտ աշխատանքային տետր և գրառումները կատարվում են միայն ՁՊՎ վարչակազմի կողմից: Այն առանձնացվել է ՁՊՎ գործունեությանը վերաբերվող ձևաթղթերից ու գրանցամատյաններից:

ՁՊՎ-ում գործում է ՀՀ կառավարության թիվ 574-Ն որոշմամբ սահմանված (հավելված ձև 12) <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանը և հրավիրված բուժաշխատողները բուժզննություն կամ բուժօգնություն իրականացնելիս համապատասխան գրառումները կատարում են նշված գրանցամատյանում:

ՀՀ ոստիկանության շտաբ